

## Տ. ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ՌՈՒՇԱՆՅԱՆ
(ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1979 թ. ապրիլի 29-ին Արմավիրի մարզի Արփիմեպ գյուղում (նախկինում՝ Աթարբեկյան):

1986-1996 թթ. սովորել է փեղի միջնակարգ դպրոցում:

1996-2001 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001-2002 թթ. ուսանել և ավարտել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. փետրվարի 20-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ազգագրական սովորույթներ՝ առնչված Մկրտության և Սուրբ Պսակի խորհուրդների հետ» թեմայով:

2002 թ. հունիսից պաշտոնավարել է նախ ՔԴ-ՔԿ-ում, ապա՝ Մամլո Դիվանում որպես գործավար-քարտուղար:

2003 թվականից ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական հիմնարկների հոգևոր պատասխանատուն է:

2005 թ. սեպտեմբերի 25-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Տաթև եպիսկոպոս Ճերեճյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ որդի: